ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Գայանե Մարտինի Սոլախյանի «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գայանե Մարտինի Սոլախյանի՝ «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում» ատենախոսության թեման արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռում ինչպես քննարկելու եվրասիական դասական ալիքից գաղափարախոսության դրսևորման առանձնահատկությունները մինչև մեր օրերը, այնպես էլ վերլուծել դրա արդիականացումը: Ատենախոսը ուսումնասիրելով 1990-ականների սկզբին գաղափարի փոխակերպումը արդեն իսկ վեր է հանել վերջինիս կարևորությունը ժամանակակից քաղաքական գործընթացներում:

Սույն թեմայի հետազոտության շրջանակներում քննարկված է այն, որ Եվրասիական միությունը մեր օրերում համարվում է ամենից շատ քննարկվող գաղափարական-ծրագրային հիմնադրույթներից մեկը և գաղափարական տեսանկյունից մեծ ուժ է ներկայացնում, այդ իսկ պատճառով էլ վերջինիս համընդգրկուն ուսումնասիրությունը արդի քաղաքագիտության հրամայականներից է դարձել: Հատկապես այն հանգամանքը, որ իր գործունեությունը ներկայումս ծավալում է տնտեսական ոլորտում համարվում է շատ կարևոր գործոն թե՛ անդամակցող երկրների, թե՛ մյուս երկրների համար, հատկապես տարածաշրջանում իրավիճակը վերահսկելու հարցում: Ընդհանուր առմամբ, ներկայումս միավորման նպատակն է անդամ-պետությունների տնտեսությունների զարգացումը և ամրապնդումը, տնտեսության մոդերնիզացումը, կապերի սերտացումը՝ համարվելով ամենակարևորներից մեկը համաշխարհային շուկայում տվյալ

պետությունների մրցունակության ցուցանիշի բարձրացման և նորանոր տնտեսական նվաճումների և հաջողությունների հարցում:

Ատենախոսին հաջողվել է մեկնաբանել և գնահատել ԱՊՀ երկրների ինտեգրացիոն գործընթացներում առավել նախընտրելի մոդելների իրականացման հեռանկարները, որոնք սկսվել են հետխորհրդային տարածաշրջանում: Փաստելով, որ հետխորհրդային երկրների փոխգործակցության մակարդակը ապահովելու համար սերտ համագործակցությունը դարձավ պարզ անհրաժեշտություն: Այս առումով Եվրասիական գաղափարը նորից «օգնության հասավ» որպես աշխարհընկալման հիմք ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության համար՝ ինտեգրացիոն նոր նախագծում:

Հարկ է նշել, որ նմանօրինակ աշխատանքների վերլուծությունը կարևոր է ինչպես պետության գաղափարական կողմնորոշման առանձնահատկությունները վերհանելու, այնպես էլ քաղաքական զարգացման հրամայականներն ու հեռանկարներն ուրվագծելու տեսանկյունից:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (յուրաքանչյուրը ներառում է երկուական ենթագլուխ), եզրակացությունից, գրականության ցանկից:

Ներածության մեջ ատենախոս Գայանե Սոլախյանը հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու կիրառման բնագավառները:

Առաջին գլուխը՝ «Եվրասիականության կայացումը և էվոլյուցիան որպես գաղափարական քաղաքական միտում», բաղկացած է երկու ենթավերնագրից, որտեղ ուսումնասիրվում է Եվրասիական գաղափարախոսության ծագման հիմքերը, Եվրասիական գաղափարի վերափոխումն ու արդիականացումը:

Երկրորդ գլուխը՝ «Եվրասիական տնտեսական միության ստեղծման գաղափարական-քաղաքական և ինստիտուցիոնալ նախապայմանները», ներառում է երկու ենթագլուխ, որտեղ վերլուծվում են Եվրասիական գաղափարների տեսլականը

ժամանակակից քաղաքական գործընթացներում և ԱՊՀ երկրների ինտեգրման գործընթացներում հնարավոր մոդելների իրականացումը:

Երրորդ գլուխը՝ «Հետխորհրդային երկրների փոխհարաբերությունների բնույթը սոցիալ-քաղաքական ինտեգրացիոն գործընթացներում», բաղկացած է երկու ենթագլուխներից, որտեղ ուսումնասիրվում են ինչպես հետխորհրդային տարածաշրջանում, այնպես էլ ԵԱՏՄ երկրների ինտեգրացիոն գործընթացների հիմնական խոչընդոտները՝ Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների արդիականացման փուլում, և դիտարկվում են ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշերը և վերջինիս հեռանկարները Եվրասիական ինտեգրացիոն գործընթացներում:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը *գիտական նորույթի* առկայությունն է: Ատենախոսության մեջ գիտական նորույթ պարունակող առավել հիշարժան արդյունք է համարվում Եվրասիական գաղափարախոսության ձևավորման հիմնական տարրերի և դրա ազդեցության վրա տարածաշրջանային ժամանակակից գործընթացների բացահայտման շուրջ արդի տեսական մոտեցումների համատեքստում գիտական հիմնավորումը:

Ատենախոսության *եզրակացությունում* Գ. Սոլախյանը ներկայացնում է հետխորհրդային տարածությունում եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիայի հետազոտության հիմնական արդյունքները:

Ատենախոսին հաջողվել է հստակեցնել իր ուսումնասիրության նպատակային դրույթները: Եվ հաշվի առնելով վերոհիշյալը, հարկ է նշել, որ ատենախոսությունը համապարփակ ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է առաջադրված խնդիրների լուծման տարբերակով:

Ատենախոսը իր աշխատությունն առավել համապատասխանեցրել է մասնագիտական դասիչին և հետազոտությունն արվել է քաղաքական գիտության տեսության կտրվածքով:

Ուսումնասիրությունն ունի հարուստ գիտահետազոտական հենք, մասնավորապես օգտագործվել են եվրասիական գաղափարախոսությունը ուսումնասիրող հեղինակների մի շարք մենագրություններ և հոդվածներ, եվրասիական ինտեգրացիոն գործընթացների վերլուծության համար անհրաժեշտ

համացանց աղբյուրներ, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր:

Ուսումնասիրության արդյունքում ստացած եզրահանգումները ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Ատենախոսության տարբեր հատվածներում առկա են գիտական ապարատին բնորոշ գնահատականներ և համեմատություններ:

Ատենախոսությունը շարադրվել է գիտական պատշաճ լեզվով և լիովին համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Ըստ այսմ, ատենախոսության եզրահանգումներն ու հիմնադրույթները հայեցակարգային են և աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների ներկայացման հետևողականությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ:

Ատենախոսության սեղմագիրը և հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակության տրամաբանությանը:

Այնուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից, որոնցից հարկ է նշել հետևյալները.

1. Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության անդամակցումը ԵԱՏՄ-ին և անցած ճանապարհը պարզ կտեսնենք վերջինիս հաջողությունները ներկայումս և այն հեռանկարները, որոնք արդեն իսկ ձևավորվում են հատկապես տարածաշրջանային զարգացման տեսանկյունից: Կարծում ենք, ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե հեղինակն բացահայտեր այն հիմնական խնդիրները, որոնց բախվել է Հայաստանի Հանրապետությունը միության անդամակցության ճանապարհին, պատմական-նկարագրողական շարադրանքի փոխարեն համեմատական վերլուծություն անցկացվեր ԵՄ ինտեգրման գրանցած չափանիշներին Հայաստանի ԵԱՏՄ ինտեգրման համատեքստում մինչև անդամակցությունը և անդամակցման ընթացքում, որը թույլ կտար զուգահեռներ անցկացնել ԵԱՏՄ-ում տարվող քաղաքականության առանձնահատկությունների հետ, ցույց տալ ինտեգրացիոն գործընթացների նմանություններն ու տարբերությունները:

2. Գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման հիմնախնդիրը ժամանակակից քաղաքական գիտության առանցքային հարցերից մեկն է: Նշված հարացույցը ներկայումս՝ միաբևեռ աշխարհակարգի առանձնահատկություններով պայմանավորված, փոխակերպման փուլում է: Ընդհանուր առմամբ, արժեքային կողմնորոշումների, ինչպես նաև աշխարհաքաղաքական և ֆինանսատնտեսական նախապատվությունների փոփոխությունները հանգեցնում են միաբևեռ աշխարհի կերպափոխմանը և լիբերտարիստական արժեքների ազդեցության թուլացմանը: Այս առումով ատենախոսությունը համընդգրկուն դարձնելու նպատակով անհրաժեշտ էր, որ ատենախոսը որոշել այն չափանիշները, որոնք ԵԱՏՄ-ի համար նոր պայմաններ են ստեղծում՝ փոփոխվող գլոբալ զարգացման հարացույցի համատեքստում:
3. Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մանրամասն ներկայացներ Եվրասիական միության անդամ-երկրների արժեհամակարգերի ընդհանրությունները՝ բացահայտելով եվրասիական քաղաքակրթության արժեքային հիմքերը:
4. Ատենախոսության երրորդ գլխի՝ «Հետխորհրդային երկրների փոխհարաբերությունների բնույթը սոցիալ–քաղաքական ինտեգրացիոն գործընթացներում», երկու ենթաբաժինները ավարտվում են հղումներով, անհրաժեշտ էր, որ հեղինակը ներկայացներ իր եզրահանգումները:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից գտնում ենք, որ **ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Գայանե Մարտինի Սոլախյանի «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջները և ատենախոս Գ. Սոլախյանը արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

քաղաքական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքական գիտության պատմության և տեսության
ամբիոնի ասիստենտ Ա. Գ. Սարգսյան

Քաղաքական գիտությունների թեկնածու
Ա. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ _____ Լ. Ս. Հովսեփյան

«03» 07 2020թ.